

ԲԱՂԱՁԱՅՆՆԵՐԻ ՀՆՉՅՈՒՆԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅՈՅ ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐՈՒՄ

Հայերենի բաղաձայնական համակարգը նրա պատմական զարգացման բոլոր փուլերում, անկախ նրա տարբեր դրսևորումներում արձանագրվող տարբերություններից, բնութագրվում է պայթական ու պայթաշփական հնչյունների եռաստիճանությամբ, շփականների երկաստիճանությամբ և ծայնորդների մենաստիճանությամբ: Եռաստիճանությունն արտահայտվում է՝ մի կողմից ծայնեղության և ոչ ծայնեղության (խլության) և մյուս կողմից՝ շնչեղության և ոչ շնչեղության հատկանիշների հակադրությամբ, իսկ շփականների երկաստիճանությունը՝ միայն ծայնեղության և խլության հակադրությամբ:

Տեղանունների բաղաձայն հնչյունների կրած փոփոխությունները ուսումնասիրելիս որպես համեմատության եզր օգտագործում ենք հին հայերենի բաղաձայնական համակարգը: Տեղանունների հնչյունաբանական քննությունը հնարավորություն է տալիս բացահայտելու տվյալ երևույթի առաջացման ժամանակը: Գրաբարում և ժամանակակից գրական հայերենում բաղաձայնական հնչյունափոխությունները քիչ են: Լեզվում ժամանակի ընթացքում տեղի են ունեցել հետևյալ պատմական հնչյունափոխությունները. վերացել է գրաբարի և ծայնորդը, գոյացել է **Ֆ** խուլ բաղաձայնը, որը գրաբարում չկար: **Հ**. Մուրադյանը նշում է, որ **Ֆ** -ի գրավոր առաջին վկայությունները վերաբերում են XIII դարին, երբ գրավոր աղբյուրներում, արդեն որպես գիտակցված հնչյուն, սկսում է արտահայտվել լատիներենից նոր փոխառած **F** տառի միջոցով: **Ֆ** -ով բառերի առաջին վկայությունները արձանագրվում են հատկապես կիլիկյան սկզբնաղբյուրներում, որը նշանակում է, թե այդ հնչյունի առաջացումը կապվում է արևմտյան տարածքի բարբառների հետ¹: Ձայնեղ պայթականներն ու հպաշփականները որոշ դեպքերում վերածվում են շնչեղների ու պարզ խուլի: Բառավերջում ն հնչյունի անկում եղել, ինչպես նաև՝ բառասկզբում յ հնչյունը հ է դարձել:

Սիջին հայերենը ներկայանում է ոչ թե որպես կենդանի խոսակցական լեզու, այլ որպես լեզվի զարգացման պատմական մի փուլ, որ արձանագրված է միայն գրավոր աղբյուրներում: Դրանց արտասանությունը միշտ չէ, որ հանրընկնում է գրի առնան շրջանի հնչմանը: **Հ**. Մուրադյանը գտնում է, որ հայոց

¹ Տե՛ս **Հ**. Մուրադյան, նշվ. աշխ., էջ 260:

լեզվի քննարկվող ժամանակահատվածի բաղաձայնների փոփոխությունների ճշգրիտ պատկերն ստանալու համար անհրաժեշտ է պարզել, թե արդյոք միջնադարյան գրականության մեջ հանդիպող ուղղագրական շեղումներն ունեն իրական հիմք, թե ուղղակի վրիպակներ են: Ուղղագրական շեղումների հերթագայումից պարզ է դառնում, որ դրանք պատահական սխալներ չեն եղել: Որպես օրինաչափ անցումներ՝ կապված են եղել միջնադարյան այս կամ այն բարբառի բաղաձայնական համակարգի առանձնահատկությունների հետ:

Միջին հայերենի հնչյունական համակարգում փոփոխության են ենթարկվել բաղաձայնները, հատկապես նրա պայթական ու պայթաշփական հնչյունների ծայնեղ և խուլ շարքերը: Հայական բաղաձայնների կրած բոլոր փոփոխությունները ստեղծում են բաղաձայնական համակարգերի տարբերակներ, որոնցից ամենահայտնին բաղաձայնների կիլիկյան համակարգն է: Այստեղ ակնհայտ է հին ծայնեղ հպականների շարքի տեղաշարժը դեպի խուլների շարքը և հակառակը: Շնչեղ խուլների շարքը մնացել է անփոփոխ, և պահպանվել է եռաստիճանությունը: Մեկ այլ բաղաձայնական համակարգով հպականների բոլոր շարքերը մնացել են անփոփոխ: Այսպիսով, եռաստիճան տեղափոխությունից բացի, միջին հայերենում գոյություն է ունեցել նաև հպական բաղաձայնների եռաստիճան անտեղաշարժ համակարգը, որը գործածական է եղել միջնադարյան Հայաստանի արևելյան տարածքում:

Բաղաձայնական համակարգը օրինաչափ կերպով ներկայացնում է տարբերակներ զանազան բարբառներում: Ըստ Ար. Ղարիբյանի՝ բաղաձայնական համակարգը բոլոր բարբառներում փոփոխություն է կրում հիմնականում երկու տիպի տեղաշարժերի և մեկ տեղաշարժ - տեղափոխման միջոցով: Ըստ առաջին տեղաշարժի՝ ծայնեղ հնչյունները վերածվում են խուլ հնչյունների բոլոր այն բառերում, որոնք գործածված են գրաբարում կամ հին հայերեն բառերում: Այս տեղաշարժը կրում են հետևյալ բարբառները՝ Աստրախանի, Շամախու, Ղարաբաղի, Հադրութի, Մարաղայի, Ռիմիայի, Խոյի, Վանի: Այս բոլոր բարբառների բաղաձայնական համակարգը երկաստիճան ծայնեղագուրկ համակարգ է: Ըստ երկրորդ տեղաշարժի՝ խուլները ծայնեղանում են, իսկ ծայնեղները կարող են դառնալ շնչեղ խուլ բոլոր այն բառերում, որոնք հին հայերենում ևս կան: Այս ենթախմբին են պատկանում «Կը» ճյուղի հետևյալ բարբառները՝ Պոլսի, Եվդոկիայի, Նոր-Նախիջևանի, Տրապիզոնի և Մարաշի: Ըստ տեղաշարժ - տեղափոխության՝ ծայնեղ հնչյունները վերածվում են խուլ կամ շնչեղ հնչյունների, իսկ խուլ հնչյունները ծայնեղանում են: Այս տեղաշարժ-տեղափոխությունն ունի երկու ենթախումբ՝ ա) երկաստիճան խլագուրկ բաղաձայնական համակարգ, որի մեջ են մտնում Տիգրանակերտի, Մալաթիայի, Նիկոմեդիայի բարբառները, բ) միջին հայերենի համակարգին

համապատասխանող բաղաձայններ ունեցող բարբառներ, որի մեջ են մտնում Ձեթունի, Հաճընի, Սվեդիայի և Բեյլանի բարբառները: Ար. Ղարիբյանը գտնում է, որ բարբառների բաղաձայնական համակարգի այս տարբերակները ցայտուն կերպով երևան են գալիս հիմնականում բառասկզբին և հատկապես բառային հիմնական ֆոնդի բառերի հին շերտի մեջ: Նա ավելացնում է, որ հաճախ կարելի է պնդել, որ այդ երևույթները բացառություններ չունեն, հետևաբար գրաբարի ժամանակ գոյություն ունեցող բարբառային բաղաձայնական կուռ համակարգերի անհերքելի վկայություններն են:

Ձայնեղի խլացում

Բ -ն խլացել է դարձել է պ՝ Բագարան (քաղաք Մեծ Հայքում) - Պակարան, Բալախոռ (գյուղ Արևմտյան Հայաստանում) - Պալախոռ, Բալու (գավառակ Արևմտյան Հայաստանում) - Պալու, Բայազետ (քաղաք Արևմտյան Հայաստանում) - Պայազիտ, Բադնոց (գյուղ Արևմտյան Հայաստանում) - Պատնոց, Բաղաբերդ, (քերդ Մեծ Հայքում) - Պաղաբերդ, Բերդիկ (գյուղ Կարսի մարզում) - Պերտիկ, Բերդուս (գյուղ Կարսի մարզում) - Պերտուս, Բերրի (քաղաք Արևմտյան Հայաստանում) - Պերրի, Բերդակ (գյուղ Արևմտյան Հայաստանում) - Պերտակ, Բեխ (գյուղ Մեծ Հայքում) - Պեխ, Բիթլիս (քաղաք Արևմտյան Հայաստանում) - Պիտլիս, Բյուրական (գյուղ Հայաստանի հանրապետությունում) - Պիրական, Իսաբեկ (գյուղ Արևմտյան Հայաստանում) - Իսապեկ, Խցաբերդ (գյուղ Ղարաբաղում) - Խիծապեթ, Աբունիհի (երկրամաս հայկական լեռնաշխարհում) - Ապունիհի, Նաբաթ (գյուղ Արևմտյան Հայաստանում) - Նապաթ, Չոբանի կամուրջ (կամուրջ Արաքս գետի վրա)- Չոպանի կամուրջ, Ամբարկա (գյուղ պատմական Փոքր Հայքում) - Ամարկա, Սուրբ (գյուղ Արևմտյան Հայաստանում, Վանի նահանգում)- Սորպ, Սուրբ սար (լեռ հայկական լեռնաշխարհում) - Սուրպ սար, Սուրբ խաչ (լեռ հայկական լեռնաշխարհում) - Սուրպ խաչ, Սուրբ Սարգիս (լեռ Փոքր Կովկասում) - Սուրպ Սարգիս, Սուրբազան (գյուղ Կարսի մարզում) - Սրպասան:

Գ -ն խլացել, դարձել է կ՝ Գագբույլ (լեռնագագաթ Փոքր Կովկասում)- Կագբել, Գոմաց ս Աստվածածին (վանք Արևմտյան Հայաստանում) - Կոմաց Աստվածածին, Ագարակ (լայալ գյուղ Մեղրու շրջանում) - Ակրակ, Մեղրագոմ (գյուղ Արևմտյան Հայաստանում) - Մեղրակոմ, Վաչազան Վերին (գյուղ Հայաստանի Հանրապետությունում) - Վաչական, Եղեգն (գյուղ Մեծ Հայքում) - Եղինկն, Աուգի (գյուղ Երևանի նահանգի Սուրմալուի գավառում)- Սուկի, Բգլից (գյուղ Արևմտյան Հայաստանում) - Բկլիս, Կանգառք (գավառ Մեծ Հայքում) - Կանկարք, Անգղ (քերդաքաղաք Մեծ Հայքում) - Անկղ, Անգեղակոթ (գյուղ ՀՀ Սիսիանի շրջանում) - Անկեղակոթ, Եղեգնուտ (գյուղ Ելիզավետպոլի նահանգում) - Եղեկնուտ, Մարգարա (գյուղ Հոկտեմբերյանի շրջանում)- Մարկարա,

Սուրբ Սարգիս (գյուղ Արևմտյան Հայաստանում) – Սուրբ Սարկիս, ճգնավոր (լեռնագագաթ Փոքր Կովկասում) – Չկնավոր, Գոհանում (լեռնագագաթ հայկական լեռնաշխարհում) – Կոհանում (տեղանունը կազմվել է դիմադրության բայից):

Դ-ն խլացել, դարձել է տ՝ Դիլիջան (քաղաք Հայաստանի Հանրապետությունում) – Տիլիճան, Դիվածոր (գյուղակ Կարսի մարզում) – Տիվածոր, Դրսեվանք (վանք Թումանյանի շրջանում) – Տրսեվանք, Դրունք (գյուղ Եղեգնաձորի շրջանում) – Տրունք, Դևի վանք (վանք Մեծ Հայքում) – Տևի վանք, Հանդեսի գյուղ (գյուղ Արևմտյան Հայաստանում) – Հանտեսի գյուղ, Խանդուք (գետակ և ձոր Արաքսի ավազանում) – Խանտուտ, Խնդուկ (գյուղ Արևմտյան Հայաստանում) – Խընտուկ, Վարդաբլուր (գյուղ Լոռու մարզում) – Վարտաբլուր, Ջարդարիչ (գյուղ Արևմտյան Հայաստանում) – Ջարտարիչ, Վարդանածոր (գյուղ Սյունիքի մարզում) – Վարտանածոր, Վարդիգեղ (լեռնագագաթ Հայաստանի Հանրապետությունում) – Վարտիկեխ և այլն:

Զ-ն խլացել, դարձել է ծ՝ Զիթահող (գյուղ Արևմտյան Հայաստանում) – Ծիթհող, Օծուն (գյուղ Լոռու մարզում) – Օծուն, Դեղծուտի վանք (վանք Իջևանի շրջում) – Դեղծնուտի վանք, Խանձարոտ (գյուղ պատմական Փոքր Հայքում) – Խանձար, Խնձորեսկ (գյուղ Գորիսի շրջանում) – Խնձորեսկ, Տանձիկ (գյուղ Արևմտյան Հայաստանում) – Տանձիկ և այլն:

Ջ-ն խլացել, դարձել է ճ՝ Ջահուկ (գյուղ Մեծ Հայքում) – ճահուկ, Ջավածոր (գյուղ Նախիջևանում) – ճավածոր, Ջանիկ (գյուղ Արևմտյան Հայաստանում) – ճանիկ, Ջաջուռ (գյուղ Ախուրյանի շրջանում) – ճաճուռ, Ջավոյի գյուղ (գյուղ Արևմտյան Հայաստանում) – ճավոյի գյուղ, Դիլիջան (քաղաք Հայաստանի Հանրապետությունում) – Դիլիճան, Բջնի (գյուղ Հրազդանի շրջանում) – Բճնի, Տերջան (գավառ Մեծ Հայքում) – Տերճան և այլն:

ԽՈՒԼԵՐԻ ԺԱՅՆԵՂԱԳՈՒՄ

Պ-ն ծայնեղացել, դարձել է ք՝ Պառավաթումբ (ավան Ղափանի շրջանում) – Բռաթումբ, Պարտեզ (գետ Ճորոխի ավազանում) – Բարդիզ, Պերմ (գյուղ Արևմտյան Հայաստանում) – Բերմ, ս Կարապետ (վանք Մեծ Հայքում) – Գարաբեդի վանք, Ապարան (քաղաքատիպ ավան Ապարանի շրջանում) – Աբարան, Մեսրեպավանք (վանք Մեծ Հայքում) – Մեսրոբավան, Դարպաս (գյուղ Գուգարքի շրջանում) – Դարբազ և այլն:

Կ-ն ծայնեղացել, դարձել է գ՝ ս Կարապետ (վանք Մեծ Հայքում) – Գարաբեդի վանք, Կարս (քաղաք Կարսի մարզում) – Գարս, Կարին (քաղաք Մեծ Հայքում) – Գարին, Կենտրոն (գյուղ Նախիի շրջանում) – Գեղոռն, Խառակոնիս (գյուղ Արևմտյան Հայաստանում) – Խարազոնիս, Օշական (գյուղ Արագածոտնի մարզում) – Օշագան, Սերկևիլ (գյուղ Արևմտյան Հայաստանում) – Սերգևեիկ,

Ակռա (վանք Կիլիկիայում) – Ագևրա, Չորուկ (գետ հայկական լեռնաշխարհում) – Չորուգ և այլն:

Տ -ն ծայնեղացել, դարձել է դ՛ Տարոն (գավառ Մեծ Հայքում) - Դարուն, Մաստարա (գյուղ Թալինի շրջանում) – Մասդարա, Մարտին (գավառ Արևմտյան Հայաստանում) – Մարդին, Այրարատ (աշխարհ Մեծ Հայքում) – Այրարադ, Խախուտ (գյուղ Արևմտյան Հայաստանում) – Խախուդ և այլն:

Ծ -ն ծայնեղացել, դարձել է ծ՝ Արծիվ (գյուղ Մեծ Հայքում) - Արծիվ:

Ճ -ն ծայնեղացել, դարձել է ջ՝ Ճամբարակ (գյուղ Կրասնոսելսկի շրջանում) – Ջամբարակ, Ճապաղջուր (գյուղ Արևմտյան Հայաստանում) – Ջաբաղջուր, Աճանան (գավառ Մեծ Հայքում) – Աջանան, Լիճք (գյուղ Սեդրու շրջանում) – Լիջք, Արծրա (գյուղ Արևմտյան Հայաստանում) – Արջրա և այլն:

Չայնեղի շնչեղացում

Բ -ն շնչեղանում, դարձել է փ՝ Բանակ (գյուղ Մեծ Հայքում) – Փանաք, Բացբերան ձոր (ձոր հայկական լեռնաշխարհում) – Փասձբերան դերե, Բալու (գավառակ Արևմտյան Հայաստանում) – Փալու, Բերրի (գավառակ Արևմտյան Հայաստանում) – Փերրի, Բջնի (գյուղ Հրազդանի շրջանում) – Փշնի, Բյուրական (գյուղ Հայաստանի Հանրապետությունում) – Փիրական, Վարդաբլուր (գյուղ Լոռու մարզում) – Վարդափուլ և այլն:

Գ -ն շնչեղացել, դարձել է ք՝ Գարդմանիկ (ամրոց Մեծ Հայքում) – Քրթմանիկ, Գեղիկ (գյուղ Արևմտյան Հայաստանում) – Քեղիկ, Ագարակ (լքյալ գյուղ Սեդրու շրջանում) – Աքրաք, Գոմ (գյուղ Արևմտյան Հայաստանում) – Քոմ, Եղեգիս (գյուղ Արևմտյան Հայաստանում) - Եղեքիս, Այգուլիս (գյուղաքաղաք Մեծ Հայքում) - Աքուլիս, Սագ (գյուղ Արևմտյան Հայաստանում) – Սաք և այլն:

Դ -ն շնչեղացել, դարձել է թ՝ Դիանա (գավառ Կապադովկիայում, Կիլիկյան Տավրոսում) – Թիանա, Դոմաշեն (գյուղ Սևանի շրջանում) - Դթմաշեն, Բաղնոց (գյուղ Արևմտյան Հայաստանում) – Բաթնոց, Խառնուրդ (գյուղ Արևմտյան Հայաստանում) – Խառնուր:

Ձ -ն շնչեղացել, դարձել է ց՝ Սալաձոր (գյուղ Արևմտյան Հայաստանում, ըստ Աճառյանի՝ սալ մշանակում է քար, ժայռ) – Սալացոր, Դեղձուտի վանք (վանք Իջևանի շրջանում) – Դեղցնուտի վանք, Գոմաձոր (գյուղ Արևմտյան Հայաստանում) – Կոմացոր և այլն:

Ձ -ն շնչեղացել, դարձել է չ՝ Ջերմուկ (գավառ Արևմտյան Հայաստանում) – Չերմիք, Ջինջ ջուր ներքին (գյուղ Արևմտյան Հայաստանում) – Չենջուր, Ջրիկ (գյուղ Արևմտյան Հայաստանում) – Չրիկ, Առաջաձոր (գյուղ Դափանի շրջանում) – Առաչաձոր, Նազաջուր (գյուղ Արևմտյան Հայաստանում) – Նազաչուր, Ջանիջուր (գյուղ Արևմտյան Հայաստանում, ըստ Աճառյանի՝ ջան

նշանակում է եռալ, պղպջալ) – Զանիչուր, Պաշարաջուր (ավերակ գյուղ Գորիսի շրջանում) – Պաշարաջուր, Սարամեջ (գյուղ Լոռու մարզում) – Սարամեջ:

ՇՆՃԵՂՆԵՐԻ ԽԼԱԳՈՒՄ

Փ –ն խլացել, դարձել է պ՝ Փարոս (գյուղ Արթիկի շրջանում) – Պարոս, Սափոր (գյուղ Արևմտյան Հայաստանում) – Սապոր, Մեծոփա (վանք Մեծ Հայքում, «մեծ ոփ, այսինքն՝ մեծ փոս»)՝ – Մեծոփա և այլն:

Ք –ն խլացել, դարձել է կ՝ Սալաքիթ (լեռ Հայաստանի Հանրապետությունում, ըստ Աճառյանի՝ քիթ նշանակում է ազատ, զերծ, սալ – քար, ժայռ) – Սալակիթ, Վանք (գյուղ Արևմտյան Հայաստանում) – Վանկ, Սաղմոսավանք (վանք Արագածոտնի մարզում) – Սագմոսավանկ, Կյանք (գյուղ Արթիկի շրջանում) – Նոր Կյանկ և այլն:

Թ –ն խլացել, դարձել է տ՝ Թարթառ (գետ Կուրի ավազանում) – Տերտեր, Տաթև (վանք Հայաստանի Հանրապետությունում) – Տատև, Հադրուք (ավան Ղարաբաղում) – Հադրուտ, Հարուք (գյուղ Արևմտյան Հայաստանում) – Հարուտ, Խանդուք (գետակ և ձոր Արաքսի ավազանում) – Խանդուտ և այլն:

ՇՆՃԵՂՆԵՐԻ ԾԱՅՆԵՂԱԳՈՒՄ

Ք –ն ծայնեղացել, դարձել է գ՝ Լուսահոնք (գյուղ Արևմտյան Հայաստանում) – Լուսհոնգ:

Թ –ն ծայնեղացել, դարձել է դ՝ Թեղուտ (գյուղ Արևմտյան Հայաստանում) – Դեղուտ, Բիթլիս (քաղաք Արևմտյան Հայաստանում) – Բիդլիս, Հարուք (գյուղ Արևմտյան Հայաստանում) – Հարուղ, Գողթ (գյուղ Աբովյանի շրջանում) – Գողդ:

Ց –ն ծայնեղացել, դարձել է ծ՝ Արցախ (աշխարհ Մեծ Հայքում) – Արծախ:

Չ –ն ծայնեղացել, դարձել է ջ՝ Կանչ (գյուղ Կիլիկիայում) – Կանջի:

ԽՈՒԼԵՐԻ շՆՃԵՂԱԳՈՒՄ

Պ –ն շնչեղացել, դարձել է փ՝ Փարսի (գյուղ Արագածոտնի մարզում) – Պարսի, Պոչենց (գյուղ Արևմտյան Հայաստանում) – Պոչենս:

Կ –ն շնչեղացել, դարձել է ք՝ Կենտրոն (գյուղ Հայաստանի Հանրապետությունում) – Քեթրոն, Վանիկ (գյուղ Արևմտյան Հայաստանում) – Վանիք, Երեցիկ (գյուղ Մեծ Հայքում) – Երեցիք, Տերիկ (գյուղ Արևմտյան Հայաստանում) – Տերիք, Սոսիկ (գյուղ Արևմտյան Հայաստանում) – Սոսիք, Խոտիկ (գյուղ Արևմտյան Հայաստանում) – Խոտիք, Թաղիկ (գյուղ Արևմտյան Հայաստանում) – Թաղիք, Թմուկ (բերդ Մեծ Հայքում) – Թմոք և այլն:

Տ –ն շնչեղացել, դարձել է ք՝ Ջուռնատուն (գյուղ Երևանի նահանգում) – Ջուռնաթուն, Հաղպատ (վանք Թումանյանի շրջանում) – Հաղբաթ, Բայազետ

¹ Տեղանունների բառարան, հ III, էջ 774:

(քաղաք Արևմտյան Հայաստանում) - Բայազեթ, Տարոն (գավառ Մեծ Հայքում) - Թարուն, Անապատ (գյուղ Երևանի նահանգում) - Անաբաթ և այլն:

Ծ - Ծ շնչեղացել, դարձել է չ ճամբարակ (գյուղ Հայաստանի Հանրապետությունում) - Չամբարակ, ճապաղ (գետակ Կուրի ավազանում) - Չապալ, ճոճկան (գյուղ Թումանյանի շրջանում) - Չոչկան, ճգնավոր (լեռնազագաթ Փոքր Կովկասի լեռնահամակարգում) - Չկնավոր, Լիճք (գյուղ Մեղրու շրջանում) - Լիչք և այլն:

Ղր ա փ ո խ ու թ յ ու ն

Ղրափոխությունը կամ հնչյունների ետևառաջությունը պայմանավորված է բառի միջի վերջին հնչյունների ավելի շուտ արտասանությամբ, այսինքն որոշ հնչյուններ փոխում են իրենց տեղերը: Այս փոփոխությանն ամենից շատ ենթարկվում են ծայնորդ հնչյունները: Ունենք տեղանունների հետևյալ ղրափոխված տարբերակները՝ Ջավաջրի վանք (գյուղ և վանք Մեծ Հայքում, հավանաբար այս տեղանվան սկզբնաձևը եղել է Ջովաջրի վանք) - Ջավարջի վանք, Կամուրջ (գյուղ Արևմտյան Հայաստանում) - Կարմուջ, Կամրջածոր (վանք Մեծ Հայքում) - Կարմնջածոր, Ախռնատուն (գյուղ Մեծ Հայքում) - Ախռանտուն, Եղեզն (գյուղ Մեծ Հայքում) - Եղինկ, Ակնծոր (գյուղ Արևմտյան Հայաստանում) - Սընկուս: Այրարատ (աշխարհ Մեծ Հայքում) - Արայրադ, Այլուր (գյուղ Մեծ Հայքում) - Ալուր, Ալևոր (գյուղ Արևմտյան Հայաստանում) - Հավլոր, Գարդմանածոր (գավառ Մեծ Հայքում) - Դարզմանածոր:

Տեղանուններում ունենք նաև ծայնավորների ղրափոխության օրինակներ՝ Անի (քաղաք Մեծ Հայքում) - Աին, Ասիա (քաղաք Կիլիկիայում) - Աիաս, Վարդաբլուր (ավերակ գյուղ Եղեզնածորի շրջանում) - Վարդափուլ և այլն:

Նախասություն

Դուրս գրված տեղանուններում, որոնք վերաբերում են նախասությանը (անտիցիպացիա), կատարվել է հիմնականում ծայնորդ հնչյունների տեղափոխություն: Այդ ծայնորդ հնչյունները առաջ են գալիս՝ պահպանվելով նաև իրենց տեղում: Այդպիսի օրինակներ են՝ Աստղկանքերդ (քերդ Մեծ Հայքում) - Աստղկանքերդ, Ամարաս (գյուղ մեծ Հայքում) - Արմարաս, Եղեզն (գյուղ Մեծ Հայքում) - Եղեզն, Սորավանք (վանք Արևմտյան Հայաստանում ըստ Աճառյանի՝ սորա նշանակում է խոռոչ, ծերպ) - Սորվավանք, Մշակավանք (վանք Մեծ Հայքում) - Մկշկավանք:

Հարասություն

Հարասության ժամանակ տվյալ հնչյունն իր տեղում արտասանվելուց բացի, հնչվում է նաև հետո, այսինքն՝ մտապատկերը շարունակվում է, ինչպես՝ Այրարատ (աշխարհ Մեծ Հայքում) - Այրայրատ, Հայաթաղ (գյուղ Էջմիածնի շրջանում) - Հայաթաղթ, Ծամծոր (գյուղ Դարաբաղում) - Ծամծոր:

ԱՌՆՃԱՆՈՒԹՅՈՒՆ

Առնձանությունը հնչյունափոխական այն երևույթն է, երբ բառի մեջ երկու տարբեր հնչյուններից մեկը ազդելով մյուսի վրա՝ նույնացնում կամ նմանեցնում է իրեն: Տեղանուններում տեղի է ունեցել ինչպես բաղաձայն հնչյունների, այնպես էլ ձայնավորների առնձանում, ինչպես՝ Ավերակ (գյուղ Արևմտյան Հայաստանում) - Էվերեկ, Բերդակ (գյուղ Արևմտյան Հայաստանում) - Բերդեկ, Երանոս (գյուղ Սարտունու շրջանում) - Էրանոս, Զորավիզ (գյուղ Արևմտյան Հայաստանում) - Զորովա, Սափոր Ներքին (գյուղ Բաթումի մարզում) - Սոփոր, Բալու (բերդաքաղաք Մեծ Հայքում) - Բուլու, Մուշկապատ (գյուղ Ղարաբաղում, ըստ Էփրիկյանի՝ մուշկ նշանակում է անուշահոտ կենդանական նյութ) - Մաշկապատ, Անի (քաղաք Մեծ Հայքում) - Անա:

Բաղաձայների առնձանում Արմաղան (լեռնագագաթ Գեղամա լեռնաշղթայում) - Աղմաղան, Վարդան (գյուղ Պարսկահայաստանում) - Վարվան, Վասակաշատ (բերդ Մեծ Հայքում) - Վաշակաշատ և այլն:

ՏԱՐՆՃԱՆՈՒԹՅՈՒՆ (ԴԻՍԻՄԻԼՅԱԳԻԱ)

Սա առնձանմանությանը միանգամայն հակադիր երևույթ, երբ բառի մեջ նույն կամ նման հնչյուններից մեկը ազդում է մյուսի վրա և լրիվ կամ մասնակիորեն տարբերում իրենից:

Ձայնավորների տարնձանում է՝ Վաչագան (գյուղ Ղափանում) - Վեչագան, Լալվար (լեռ Փոքր Կովկասի լեռնահամակարգում, ըստ Աճառյանի՝ լալ նշանակում է «մի տեսակ պատվական քար և բաց կարմիր, գեղեցիկ, պայծառ գուն») - Լելվար, Գավառ (գավառակ Արևմտյան Հայաստանում) - Գավեռ, Արշամաշատ (քաղաք Մեծ Հայքում) - Արշեմաշատ, Ագարակ (լքյալ գյուղ Մեղրու շրջանում) - Էգրակ, Գավազան (բերդ Մեծ Հայքում) - Գավազին և այլն: Բաղաձայնների տարնձանում Սարավարդ (լեռնագագաթ Զանգեզուրի լեռնաշղթայում) - Սալվարդ:

ՀՆՇՅՈՒՆԻ ԻԱՎԵԼՈՒՄ

Հնչյունի իավելում է կոչվում հնչյունափոխության այն երևույթը, երբ բառի մեջ ավելանում է մի նոր հնչյուն: Այդպիսի տեղանուններն են՝ Թուխ (գետ հայկական լեռնաշխարհում) - Թուխա, Եղեգնոց (գյուղ Լեռնային Կիլիկիայում) - Բեղեգնոց, Թմուկ (բերդ Մեծ Հայքում) - Թմբուկ, Բերրի (քաղաք Արևմտյան Հայաստանում) - Բերին, Կամուրջ (գյուղ Վերին Միջագետքում) - Կարմունջ, Կանչ (գյուղ Կիլիկիայում) - Կանչի, Թաղիկ (գյուղ Արևմտյան Հայաստանում) - Թյաղիկ, Արմաղան (լեռնագագաթ Գեղամա լեռնաշղթայում) - Մաղմաղան, Սամսոնի վանք (վանք Տավուշի մարզում) - Սամփսոն, Սամսոն (քաղաք և նավահանգիստ Տրապիզոնի նահանգում) - Սամսսոն, Բերդաձոր (գավառ Մեծ Հայքում) - Բերձորք, Հանդամեջ (գյուղ Նախիջևանում) - Հանդամեջք,

Ոշտունիք (գավառ Մեծ Հայքում) – Ըռշտունիք, Ս. Ռոմանոս (վանք Կիլիկիայում) – Ս. Ըռամանոս, Անդոկ (գետ հայկական լեռնաշխարհում) – Անդովկ տեղանվան մեջ վ հնչյունի հավելում է եղել ո –ից հետո: Ընդհանրապես վ –ի հավելումը բնորոշ է հունական ծագում ունեցող բառերին և ով հնչյունախումբը համապատասխանում է ω-ին: Սակայն այդ երևույթը ընդհանրացվել է և վ –ի հավելում է նկատվում նաև այն բառերում, որոնք հունարեն ω չունեն կամ հայերեն կազմություններ են, այսինքն այդ բառերում գործել է համաբանության երևույթը՝ աղաբոլորվել, քրիստովնեայ, սրովբե և այլն:

Հնչյունների կորուստ

Հնչյունի հավելման հակադիր երևույթը հնչյունի կորուստ է, երբ բառի մեջ ընկնում (սղվում) է որևէ հնչյուն: Այդպիսի տեղանուններից են Բերդագարակ (գավառ Մեծ Հայքում) – Բերդագրակ, Բագարան (քաղաք Մեծ Հայքում) – Բագրան, Ամարաս (վանք Մեծ Հայքում) – Մարաս, Ադամա (քաղաք Կիլիկիայում) – Ադան, Ապարան (գյուղ Մեծ Հայքում) – Պարան, Անի (քաղաք Մեծ Հայքում) – Ան, Կնիկ (գյուղ Թալինի շրջանում, այս տեղանունը հավանաբար կնյունիկ բառի հնչյունափոխված ծնն է) – Կնիկ, Առկուռի (գյուղ Մեծ Հայքում, ըստ ավանդ - ան՝ իբր Նոյ մահապետը տապանից դուրս գալուց հետո տնկել է ուռենու տունկը)¹ – Ակուռի, Հալեպ (քաղաք Ասորիքում, արաբերեն հալեպ նշանակում է «կթած կաթ») – Ալեպպո, Հաղպատ (վանք Թումանյանի շրջանում, կազմված է հաղբ և ատեն բառերից) հաղբ նշանակում է որոգայթ, արսիքն ատում են կամ խույս են տալիս որոգայթից: Այս անունը տվել են վանքին առաջին միաբանները, որոնք աշխարհը որոգայթ համարելով, փախել են ունայնությունից – Ախպար, Համդամեջ (գյուղ Նախիջևանում) – Անդամեջ, Սանահին (գյուղ Թումանյանի շրջանում) – Սանահին, Թագավորանիստ (գյուղ Գուգարքի շրջանում) – Թագավորանիս, Բանակ (գյուղ Մեծ Հայքում) – Բանա, Ճապաղջուր (գյուղ Արևմտյան Հայաստանում) – Ճապաջուր, Դյուբական (գյուղ Մեծ Հայքում) – Դուտական, Կապույտ (գյուղ Աղգեբեկովի շրջանում) – Կապուտ, Հայրապետի գյուղ (գյուղ յուր Արևմտյան Հայաստանում) – Հայապետի գյուղ, Քուռակախաղաց (լեռ փոքր Կովկասում, ըստ ավանդության՝ Նորավանքի վարդապետներից մեկը, մատակ ձին մտած, անցնում է այս լեռան մոտով, և արծիվը վեր է թռցնում) – Ուռակախաղաց և այլն:

Հնչյունների ամփոփում

Հնչյունների ամփոփումը (հապլոլոգիա) բառի կազմում եղած իրար հաջորդող նույն հնչյունակապակցություններից կամ վանկերից մեկի կրճատումն է, ինչպես՝ Արտաշաշատ (քաղաք Մեծ Հայքում) – Արտաշատ,

¹ Տե՛ս Գ.Ս. Էփրիկյան, Պատկերազարդ բնաշխարհիկ բառարան, էջ 85:

Բաղադրե՛լ (քաղաք Արևմտյան Հայաստանում) - Բաղե՛շ, Համամաշեն (գյուղ Տրապիզոնի նահանգում, ըստ Աճառյանի համամ արա բաղան անուն է, որ նշանակում է վայրի աղավնի) – Համշեն, Անանավանք (գյուղ Արևմտյան Հայաստանում) - Անավանք, Աբունիսի (երկրամաս Ուրարտուում) - Աբունի:

ՀՆՋՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՐԳԵԳՈՒՄ

Հայերենում առաջնալեզվային պայթականները միանում են առաջնալեզվային շփականների հետ և կազմում են բարդ հնչյուններ: Մեր կողմից դուրս գրված տեղանուններում միևնույն արմատի մեջ բարդ հնչյունը բաժանվում է բաղադրիչ հնչյունների և դրանից մեկը կորցնելով՝ առաջ բերում տեղանվան նոր տարբերակ:

Այսպես՝ $Ձ = \eta + q$, $q = u$ ՝ Աղածոր (գյուղ Արծյանի շրջանում) - Աղազոր, Աղասոր, Արջածոր (գյուղ Ղափանի շրջանում) - Արջազուր, Աղծնիք (գյուղ Արևմտյան Հայաստանում) - Աղնսիկ, Լավծոր (գյուղ Արևմտյան Հայաստանում) - Լավսոր, Կոռնիծոր (գյուղ Գորիսի շրջանում, ավանդությունը անունը կապում է այս ձորում տեղացիների կատարած կոռային աշխատանքի հետ) - Գերինզոր, Մաքիծոր (գյուղ Արևմտյան Հայաստանում) - Մաքիսոր, Մկնածոր (գյուղ Արևմտյան Հայաստանում) - Մընկուսոր, Վարդանածոր (գյուղ Սյունիքի մարզում) - Վարդանազուր Առաջին և այլն:

$S = p + u$ ՝ Հայտուր (գյուղ Արևմտյան Հայաստանում) - Խաստուր, Հացկնի (գյուղ Արևմտյան Հայաստանում) - Հասկնի, Բզից (գյուղ Արևմտյան Հայաստանում) - Բզիս, Բաղնոց (գյուղ Արևմտյան Հայաստանում) - Բաթնոս, Պատնոս, Բացբերան ձոր (ձոր հայկական լեռնաշխարհում) - Փասփերան դերե:

$Ձ = \eta + \theta$ ՝ Նախիջևան (քաղաք Նախիջևանում) - Նախժավան, Բջնի (գյուղ Հրազդանի շրջանում) - Բժնի, Փշնի ($\theta = \gamma$):

$Ձ = p + \gamma$, $\gamma = u$ ՝ Խաչակա վանք (վանք Մեծ Հայքում) - Խասկա վանք:

$\delta = u + \gamma$ ՝ Լիճք (գյուղ Մեղրու շրջանում) - Լիշկ, Լեշկին:

Տարաբնույթ կամ խառը տիպի հնչյունափոխություն

Բառերում (հիմնականում հատուկ անուններում) տեղի է ունենում ոչ միայն առանձին վանկերի, այլև ամբողջական բառերի առանձին մասերի կրճատում: Կրճատման այս երևույթը Ա. Սուքիասյանը և Վ. Առաքելյանը անվանում են «արտակարգ» հնչյունափոխություն, իսկ Հ.Պետրոսյանը՝ «հնչյունական կրճատումներ»:

Մենք այս տիպը անվանել ենք տարաբնույթ կամ խառը տիպի հնչյունափոխություն, քանի որ տեղանուններում կատարված հնչյունական փոփոխությունները բազմաբնույթ են:

1. Ունենք տեղանուններ, որոնք բառավերջից կորցնում են հնչյունակապակցություն, որի փոխարեն արտասանվում է ո Գալուստի ծոր (ծոր Արածանիի վերին հոսանքի շրջանում) - Գալոյի ծոր, Դերծիկի ս Թեոդորոս (վանք Փոքր Հայքում) - Դերծկո վանք, Գյուտի վանք (վանք Մեծ Հայքում) - Գտկո վանք (այս տեղանվան կ հնչյունի առկայությունը վկայում է, որ Գյուտ բառը եղել է Գյուտիկ):

2. Բառերից դուրս է ընկնում առաջին վանկը, ինչպես՝ Աղբրաջուր (գյուղ Ելիզավետպոլի նահ-ում) - Բրաջուր, Այգի (գյուղ Արևմտյան Հայաստանում) - Գի, Արշամաշատ (քաղաք Մեծ Հայքում) - Շամշատ, Իշխանի գյուղ (գյուղ Կարսի մարզում) - Խանի գյուղ, Արշակաշեն (գավառ Մեծ Հայքում) - Շակաշեն:

3. Պահպանվել է բառասկիզբը՝ դուրս մնալով բառավերջից հնչյունակապակցություններ՝ Նալբանդ (լեռ Կարսի մարզում) - Նալ, Նարեկ (գյուղ Արևմտյան Հայաստանում) - Նար, Խանձարուր (գյուղ պատմական Փոքր Հայքում) - Խանձար, Ռումտիկին (գյուղ պատմական Փոքր Հայքում) - Ռումտիկ:

4. Բառամիջի (-ակ-) հնչյունակապակցությունը դուրս է ընկնում՝ Տատրակաբնակ Աստվածածին (վանք Արևմտյան Հայաստանում) - Տատրաբնակ Աստվածածին, Վասակակերտ (գյուղ Արևմտյան Հայաստանում) - Վասկերտ, Արշակունի (գյուղ Արևմտյան Հայաստանում) - Արշունի: Ունենք նաև Գաղթական (գավառ Մեծ Հայքում, Գողթն անվան շատ հազվադեպ գործածական ձևը) - Գաղթան տեղանունը: Գողթն անվան սեռականը լինում է Գողթան, ապա ո -ն առնմանությամբ դարձել է ա՝ Գաղթան, որից հետո ավելացել է -ակ- հնչյունակապակցություն՝ Գաղթ+ակ+ան:

5. Դուրս է ընկնում բառամիջի -ավ- հնչյունակապակցությունը, ինչպես՝ Աղավնատուն (գյուղ Էջմիածնի շրջանում) - Աղնատուն, Շավարշավան (գավառ Մեծ Հայքում) - Շավարշան, Պառվաթումբ (ավան Ղափանի շրջանում) - Պռաթումբ:

6. Բարդ բառերը, որոնց առաջին բաղադրիչը կրկին շեշտակիր վանկին մոտենալու պատճառով զրկվել է որոշ հնչյունակապակցություններից: Շեշտակիր վանկին մոտեցող բաղադրիչների մեծ մասի մեջ, որոնք պահպանվում են ու միանում շեշտակիր վանկին, առկա է ա ձայնավորը: Ունենք Խավարտանք (քաղաք պատմական Կապադովկիայում) - Խավտանք, Վանքասար (հուրճաններ Գորիսի շրջանում) - Վնսար, Այգուլիս (գյուղաքաղաք Մեծ Հայքում) - Այլիս, Բերդածոր (գավառ Մեծ Հայքում) - Բերծոր:

7. Դուրս է ընկել բարդ բառի երկրորդ բաղադրիչը՝ Տատրակաբնակ Աստվածածին (վանք Արևմտյան Հայաստանում) - Տատրկա, Հալիծոր (գյուղ Գորիսի շրջանում, ըստ Աճառյանի՝ հալի նշանակում է սպիտակ խոտ) - Հալե:

8. Պահպանվել է բարդ բարի առաջին արմատն ու երկրորդ արմատի սկզբնահնչյունը՝ $h > խ$ փոփոխությամբ՝ **Ջրհոր** (գյուղ Արևմտյան Հայաստանում) – **Ջուրխ**:

9. Բառեր, որոնցում տեղի է ունեցել նույն հնչյունի (ա) կրճատում՝ **Վարաժ-նունիք** (գավառ Մեծ Հայքում) – **Վաժնունիք**, **Ոսկանապատ** (գյուղ Ելիզավետպոլի գավառում) – **Ոկնապատ**, **Արամազդ** (լեռնագագաթ Փոքր Կովկասի լեռնահամակարգում) – **Արմազ**, **Նահապետ** (լեռնագագաթ Հայաստանի Հանրապետությունում) – **Նաբեթ**, **Վասակաշատ** (քերդ Մեծ Հայքում) – **Վաշկաշտ**:

10. Բառեր որոնք վերը նշված կանոններից դուրս են մնում՝ **Խրախճանյաց վանք** (վանք Արևմտյան Հայաստանում) – **Խաղճ**, **Աթանագինե** (վանք Մեծ Հայքում) – **Աթանիս** և այլն:

Խ – ղ

$խ > ղ$ փոխակերպմամբ տեղանունները բառարանում քիչ են՝ **Քասախ** (գետ Արաքսի ավազանում) – **Քասաղ**: Այս տեղանունը դեռևս հիշատակել է Մ.Խորենացին (V դ.)՝ **Քասաղ, Քարսահղ, Քսաղ** ձևերով: **Ղ. Ալիշանը** այն առաջացած է համարում **Քարսահ** ձևից, որն ավելի ճիշտ է մեր կարծիքով: **Քարսահ** բառում հետագայում տեղի է ունեցել $ր$ -ի անկում՝ **Քասահ**, ապա $h > խ$ փոխակերպմամբ դարձել է **Քասախ**: Ունենք նաև **Ջախջախ** (գետ Եփրատի ավազանում) – **Ջաղջախ** տեղանունը:

Կ – յ

Արարատ Ղարիբյանը գրում է, որեթե բառը վերջանում է $կ$ հնչյունով և հաջորդ բառը սկսվում է բաղաձայնով, ապա այս $կ$ -ն վերածվում է $յ$ հնրյունի, օրինակ՝ տախտակ կա - տախտայ կա¹: Բառարանում $կ > յ$ փոխակերպմամբ մեկ բառ ունենք՝ **Մեկ Մասուր** (գյուղ Արևմտյան Հայաստանում) $>$ **Մեկմանսու** $>$ **Մեյմանսուր**:

Հ – խ

Հր. Աճառյանը $h > խ$ հնչյունափոխությունը դնում է արաբական արշավանքներից հետո և թուրքական տիրապետությունից առաջ ընկած շրջանում: Ունենք՝ **Հացտուր** (գյուղ Արևմտյան Հայաստանում) – **Խացտուր**, **Հարսիկ** (գյուղ Արևմտյան Հայաստանում) – **Խարսիկ**, **Հացընկեր** (գյուղ Արևմտյան Հայաստանում) – **Խացընկեր**, **Հացաբլուր** (գյուղ Արևմտյան Հայաստանում) – **Խացաբլուր**, **Ջրհոր** (գյուղ Արևմտյան Հայաստանում) – **Ջըխոր**, **Հեթ** (գյուղ Արևմտյան Հայաստանում) – **Խըթ**:

¹ Տե՛ս Ա. Ղարիբյան, նշվ. աշխ., էջ 344:

2 > Կ փոխակերպումը արձանագրվել է ծոր բառում: Ձորը դարձել է կոր հետևյալ տեղանուններում 3ույնոց ծոր (գյուղ Մեծ 3այքում) - 3ույնոց կոր, Իշխանածոր (գյուղ Արևմտյան 3այաստանում) - Իշխենկոր: Այս փոփոխությունը հավանաբար կատարվել է ժողովրդի կողմից: Ժողովուրդը ծոր և կոր բառերում նկատել է իմաստային նույնություն:

Ունենք նաև Ամառնափոր (գյուղ եծ 3այքում) տեղանունը, որի փոր բաղադրիչը ծոր բառի հնչյունափոխված տարբերակն է¹:

Բերդակուր (ավան Արցախ աշխարհում) տեղանունը Կ. Գանձակեցին հիշատակում է Բերդակուր ձևով, իսկ Էփրիկյանը հնարավոր է համարում, որ նախապես սա եղած լինի ոչ թե Բերդակուր, այլ Բերդածոր²:

Ղ - Լ

3ին հայերենի շրջանում այս տառերով արտահայտված հնչյունները ներկայացնում էին Լ -ի արտասանական տարբեր որակներ: Լ -ն և ղ -ն գրության շփոթը արձանագրվում է մեզ հասած առաջին իսկ ձեռագրերում: Ունենք Լ - ղ գրությամբ հետևյալ տեղանունները ճապաղջուր (գյուղ Արևմտյան 3այաստանում) - ճապալջուր, Անգղ (բերդաքաղաք Մեծ 3այքում) - Անգլ, Աբեղյանք (գավառ Մեծ 3այքում) - Աբեյանի և այլն:

Ղ - խ

Ղ - խ փոփոխության են ենթարկվել հետևյալ տեղանունները՝ 3աղպատ (վանք Թումանյանի շրջանում) - 3ախպատ, Նորաղբյուր (գյուղ Ամասիայի շրջանում) - Նորախայուր, Վարդաղբյուր (գյուղ Շիրակի մարզում) - Վարդախայուր, Խոզաղբյուր (գյուղ Արևմտյան 3այաստանում) - Խոզախայուր, Մատաղաբլուր (էռ 3այաստանի 3անրապետությունում) - Մատախաբլուր, Մուշեղաշեն (գյուղ Արևմտյան 3այաստանում) - Մուշախշեն, Ղսեղ (գյուղ Թումանյանի շրջանում, առաջացել է դուզ տեղ բառակապակցությունից) - Ղսեխ:

Ռ - ր

Այս ծայնորդները միմյանցից տարբերվում են թրթռունության աստիճանով: Ունենք՝ Ռուշտի (գյուղ Արևմտյան 3այաստանում, ըստ 3ր. Աճառյանի՝ ռուշտ ծագմամբ անհայտ է) - Ռուշտի, Ռումտիկին (գյուղ պատմական Փոքր 3այքում) - Ռումտիկին, Խառակոմիս (գյուղ Արևմտյան 3այաստանում) - Խարակոմիս, Կանգառք (գավառ Մեծ 3այքում) - Կանգարք, Սփռածոր (գյուղ Արևմտյան 3այաստանում) - Սփրածոր, Թաղասեռ (գյուղ

¹ Տե՛ս Տեղանունների բառարան, հ. Լ, էջ 216:

² Տե՛ս Էփրիկյան, նշվ. աշխ., հ. Լ, էջ 416:

Հադրուքի շրջանում, ըստ Հր. Աճառյանի՝ սեռ նշանակում է ծայր) - Թաղասեր, Բալախոռ (գյուղ Արևմտյան Հայաստանում) - Բալախոր:

Ր - ռ

Հայերենի ժամանակակից բարբառներում արձանագրվում է մաև հակառակ երևույթը, երբ Ր-ի դիմաց արտասանվում է ռ: Ունենք Խանձարուր (գյուղ պատմական Փոքր Հայքում) - Խանձառ, Նարեկ (գյուղ Արևմտյան Հայաստանում) - Նառ, Վարդան (գյուղ Պարսկահայաստանում) - Վառդան, Լարիսա (քաղաք Փոքր Հայքում) - Լառիսա, Լորուտ (գյուղ Թունանյանի շրջանում) - Լոռուտ և այլն:

Ս - զ

Ս - զ սուլականները բնիկ հայերեն բառերում հիմնականում սերում են հնդեվրոպական պայթականներից («' և ց'h): Հ. Մուրադյանը նշում է, որ այս կարգի օրինակներ հին ծեռագրերում հանդիպում են շատ հազվադեպ՝ Սուրենի ջուր (գետակ հայկական լեռնաշխարհում) - Ջուրունի ջուր, Վասակակերտ (գյուղ Արևմտյան Հայաստանում) - Վազկերտ, Պստիկ (գյուղ Արևմտյան Հայաստանում) - Պզտիկ, Դարպաս (գյուղ Գուգարքի շրջանում) - Դարբազ, Ամարաս (վանք Մեծ Հայքում) - Ամարազ, Սոս (գյուղ Դարաբաղի Մարտունու շրջանում) - Սուզ, Արամուս (գյուղ Աբովյանի շրջանում) - Արամուզ և այլն:

Յ > հ

Յ ծայրորդը բառի մեջ հանդես էր գալիս բոլոր դիրքերում՝ բառասկզբում, բառամիջում, բառավերջում: Հ. Մուրադյանի հավաստմամբ ծեռագրերը թեև ժլատ, բայց տալիս են գրության մեծ ծանրություն, երբ բառասկզբի ավանդական յ -ն արտահայտված է հ -ի միջոցով՝ յստակ - հստակ և այլն: Ունենք Յաղթուկ (գյուղ Արևմտյան Հայաստանում) - Հաղթուկ, Յովնանի ագարակ (ագարակ Լեռնային Կիլիկիայում) - Հովհանի ագարակ: Յովնան նշանակում է աղավնի: Յուտապե (քերդ Կիլիկիայի հայկական թագավորությունում) - Հուտապե: ության հայցմամբ և հույսերով:

Ն > -

Գրաբարում բազմաթիվ բառեր վերջավորվում էին ն հնչյունակապակցությամբ, որոնցում պատմական հնչյունափոխությամբ վերջահանգ ն ծայրորդը ընկել է: Ն -ի անկում է եղել հետևյալ տաղանվան մեջ՝ Նախեղուռն (գյուղ Մեծ Հայքում) - Նախեղուռ: